Ծուշանիկ Կուրղինյան

Ղարիպ մշեցու նամակը

Իմ անուշիկ հոգուս հատոր զավակներ,
Ուղարկում եմ սրտիս խորունկ խորքերից
Թանկագին ու սրտաբուխ բարևներ:
Յոթը տարին ահա անցավ ու գնաց,
Տառապեցի գիշեր ցերեկ ես մենակ .
Ծերացել եմ, ուժ, զորություն չմնաց,
Դարդերս շա՛տ , ծով է անծայր ու անտակ:
Գիշեր ցերեկ մորմոքում եմ ու լալիս,
Երազումս ձեզ եմ տեսնում շարունակ,
Սև-սև մտքեր ինձի հանգիստ չեն տալիս,
Անիծում եմ իմ կյանք, իմ բախտ, ժամանակ:

Թե երբ կգամ, աստված վկա՝ չգիտեմ,
Ամեն մի օր, ամեն վայրկյան եռանդով
Ես ինքս ինձ ճարահատյալ ասում եմ .
Էլ չեմ մնա, տուն կգնամ ես շուտով:
Բայց գալիս են ու գնում իմ ամիսներ,
Էլի ղարիբ թափառում եմ ես տխուր,
Օրըստօրե թուլանում են իմ թևեր,
Քիչ չտեսա ես մարդկանցից թուք ու մուր:
Արևի հետ վեր եմ կենում ես տեղից
Գրաստի պես խոնարհ, հլու աշխատում
Եվ շատ անգամ դեմքիս հասած բռունցքից

Հացի համար հոգոց անգամ չեմ հանում:

Էլ ի՞նչ ասեմ, ո՛ր մեկ ցավս ձեզ պատմեմ,
Անտեր մնա օտար երկիր աշխատանք՝
Գլուխս քարին, քարը գլխիս տալիս եմ,
Չկա մի ճար, չկա օգուտ, սփոփանք . . .

Իմ սիրելի, իմ թանկագին կողակից.
Նայե տանս, բալաներիս սփոփե,
Չլինի թե նոր պարտք առնես աղայից,
Ճերմակ եզս էլ մինչև գալս մի ծախե:
Իմ ուղարկած այս մի քանի մանեթով
Մի կերպ ապրիր զատկին՝ թե տա տեր աստված . . .

1906 թ .